ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/13

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով
Մասնակից՝ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցում, օդորակիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.01.2020թ. թիվ 1.4/382-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 24.01.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 03.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 03.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.02.2020թ.-ին:

2. <u>ՀՀ Ազգային ժողով-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ Ազգային ժողովը, 22.01.2020թ.-ին թիվ 1.4/382-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊ, «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊ և «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերությունները:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 18-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի

գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «ԷՅՉ ՎԻ ԵՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է, «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով ծանուցվել է շտկելու 1.1 Հավելվածով սահմանված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 42-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 2 Արձանագրության (կցվում է) 10-րդ կետով կայացրած որոշմամբ մերժել է «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.01.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով հրավիրված նիստին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Ազգային ժողովը օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով զևաևշման հարցման մասին: 22 նոյեմբերի 2019թ.-ի թիվ 1 որոշմամբ այն հաստատվել է գնահատող հանձնաժողովի կողմից, որի հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվում էին 2 տարբեր հզորությունների օդորակիչներ: Սույն հրավերը հրապարակվել է 29.11.2019թ.-ին, ժամը 18:34-ին՝ ՀՀ Ֆինանսների Նախարարության www.armeps.am կայքում: Դա եղել է աշխատանքային շաբաթվա վերջին օրը, իսկ պարզաբանումների համար ժամկետը տրված է եղել 29.11.2019թ.-ի ժ. 18:22-ից մինչև 01.12.2019 թ.-ի ժ.12:00 (այսինքն ոչ աշխատանքային օրեր):

Տվյալ հրավերով մրցույթին մասնակցելու մասին «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ն տեղեկացել է հրավերի հրապարակմանը հաջորդող երկուշաբթի օրը:

Քանի որ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով զնանշման հարցման հրավերով պարզաբանում կատարել հնարավոր չէր, ուստի «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից հնարավոր չեղավ պարզաբանել, թե հրավերով տրված 1-ին չափաբաժնի տեխնիկական պարամետրերում ինչպես կարող է 9000ԲՏՈՒ հզորությամբ օդորակիչի համար պահանջվել առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում 2530ՎՏ և տաքացման ռեժիմում 2620ՎՏ:

Տրված պարամետրերը սխալ են, քանի որ 2530ՎՏ և 2620ՎՏ հզորությունները վերաբերում են օդորակիչի արտադրողականությանը և դրանք չեն կարող լինել առավելագույն, ընդհակառակը, պետք է լինեն նվազագույն: Սպառվող հզորությունը դա էլէներգիայի ծախսն է, որը հրավերում նշված է. տաքացման ռեժիմում 765 ՎՏ և սառեցման ռեժիմում 885ՎՏ: Նշված պարամետրերի մասին նշվում է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշման 2-րդ կետում, որտեղ մասնավորապես ասվում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել առավելագույն հզորության պահանջի մասով մասնակիցների ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ընդգծելով այն, որ տեխնիկական բնութագրով ներկայացրած «առավելագույն սպառվող հզորությունը սառեցման և տաքացման ռեժիմում» արտահայտությունն օգտագործվել է իբրև տերմին, այլ ոչ որպես սահմանափակող դրույթ:

Ուստի «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ն մասնակցեց ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով հրավերին՝ նշելով սառեցման հզորություն 2637ՎՏ և տաքացման հզորություն 2784ՎՏ , այլոչ թե առավելագույն սպառվող հզորություն սառեցման կամ տաքացման ռեժիմներում: «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում այս պարամետրերը ավելին են, ինչը վկայում է, որ մեր կողմից առաջարկվող ապրանքի դեպքում տրված բոլոր

պահանջները բավարարում են և միևնույն ժամանակ ավելի բարձր արտադրողականություն են ապահովում, ինչը չի կա յաղ դիտարկվել պահանջներից շեղում և շրկման ենթակա ցուցանիշ չէ, քանի որ 9000 ԲՏՈՒ սառեցման հզորությամբ օդորակիչի սառեցման նվազագույն հզորությունը հավասար է 2637 ՎԱՏՏ, իսկ մեր կողմից տրված 9000ԲՏՈՒ սառեցման հզորությամբ օդորակիչը տաքացման ռեժիմում ունի 9500 ԲՏՈՒ հզորություն, որը հավասար է 2784 ՎԱՏՏ

3.412ԲՏՈՒ= 1ՎԱՏՏ

9000ԲՏՈՒ/3.412=2637ՎԱՏՏ

9500ԲՏՈՒ/3.412=2784ՎԱՏՏ

Ի տարբերություն «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն հրավերի տեխեիակական բնութագրում 1-ին չափաբաժնի մասով ավել է սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում 2500ՎՏ և տաքացման ռեժիմում 2600ՎՏ: Ներկայացված տվյալները սխալ են, քանի որ 1 ՎԱՏՏ- 3.412ԲՏՈՒ, ուստի իրենց կողմից ներկայացված օդորակիչը չի կարող համապատասխանել հրավերով տրված 9000 ԲՏՈՒ հզորությամբ օդորակիչի պահանջին, որովհետև 2500ՎՏ սառեցման հզորության դեպքում ստացվում է 8530 ԲՏՈՒ և 2600ՎՏ տաքացման հզորության դեպքում՝ 8871 ԲՏՈՒ հզորությամբ օդորակիչ:

1ՎԱՏՏ=3.412ԲՏՈՒ

*2500ՎՏ*3.412=8530ԲՏՈՒ*

*2600ՎՏ*3.412=8871ԲՏՈՒ*

Միաժամանակ հայտնում ենք, որ «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է սառեցման ռեժիմում 2800ՎՏ ե տաքացման ռեժիմում 2900ՎՏ, ինչն ավելի խելամիտ և ընդունելի ցուցանիշ է:

16.12.2019թ-ին «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որում ասվում է, որ «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի և «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում ակնհայտ երևում է առկա անհամապատասխանությունները առավելագույն հզորությունների մեջ, որ այլ ընկերությունների համար առավելագույն հզորություն նշված լինելը խոչընդոտ է հանդիսացել և սահմանափակել է նրանց մասնակցությունը ի տարբերություն մասնակից կազմակերպությունների առաջարկվող օդորակիչները չեն ապահովում ավելի տնտեսող՝ հետևաբար ավելի արդյունավետ աշխատանքային ռեժիմ, ինչն օրենքով է ամրագրված և չպետք է անտեսվի Պատվիրատուի կողմից հայտերի գնահատման արդյունքում: «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն պնդել է, որ մյուս երկու

մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքները չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է.

1 .Պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անբավարար գնահատել «ՏՈԻՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի և «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը և մերժել,

2.Կասեցնել 2019թ-ի դեկտեմբերի 17-ին ժամը 15:30-ին նշանակված գների նվազեցման բանակցությունները:

ՀՀ Ազգայի ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումը եղել է հետևյալը.

ՀՀ Ազգային ժողովը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.12.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի մասին, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ հայտնելով, որ Պատվիրատուի կողմից մանրամասն ուսումնասիրվել են մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բոլոր գործողություններն իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Մասնավորապես՝ հրավերով նախատեսվել են «Ա» դասի օդորակիչներ, որոնք ունեն համապատասխան ստանդարտներ. տվյալ դեպքում բոլոր մասնակիցների դասերը համապատասխանել են նշված դասին, բացի «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ից: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատել նաև առավելագույն հզորության պահանջի մասով մասնակիցների ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ընդգծելով այն, որ տեխնիկական բնութագրով ներկայացրած «առավելագույն սպառվող հզորությունը սառեցման և տաքացման ռեժիմում» արտահայտությունն օգտագործվել է իբրև տերմին, այլոչ որպես սահմանափակող դրույթ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով տարակերպ մեկնաբանությունները:

Օրենքի այս կետը չի պահպանվել, ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշը «առավելագույն սպառվող հզորությունը սառեցման ռեժիմում 2530ՎՏ և տաքացման ռեժիմում 2620ՎՏ » չի բխում օրենքի նշված կետից:

Գնահատող հանձնաժողովի կողմից «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ին ծանուցվել է կատարել շտկում Հավելված 1.1-ում այն մասով, որտեղ գրված է, որ օդորակիչը տրամադրվում է մինչև 3մ պղնձե խողովակով և առանց ավտոաշտարակի, ինչը մեր կողմից կատարվել է 10.12.2019թ-ին և ուղարկվել hermineh@parlament.am էլեկտրանային փոստի հասցեին: 12.12.2019թ-ին գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար, ինչը նշված է ՀՀ Ազգային Ժողովի կողմից օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի Արձանագրություն N2-ում: Այսինքն ի սկզբանն գնահատող հանձնաժողովը անընդունելի չի համարել մեր կողմից ներկայացված հզորության պարամետրերը:

Այնուհետև ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի հիման վրա «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ին ծանուցվել է կատարել շտկում հավելված 1.1-ում, սակայն այդ շտկումը չի կատարվել, քանի որ դա կլիներ սխալ տեխնիկական բնութագրի տրամադրում:

13.01.2020թ նիստին հանձնաժողովը որոշեց մերժել «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով պատճառաբանելով, որ մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում անհամապատասխանությունները չեն շտկվել:

Վերը թվարկվածից ելնելով՝ 23.01.2020թ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով եախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/13 ընթացակարգի հետ կապված «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ն հայտնում է իր դիրքորոշումը՝

Կարծում ենք, որ «ՏՈՒՆ ԿՈՄՊԼԵՔՍ» ՍՊԸ-ն չի խախտել ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը, գնման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել խախտումներ և պատճառ չկա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար 29.11.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Վիէլվի Սենթր», «Տուն Կոմպլեքս» և «էյչ Վի Ես Սի Սերվիս» ՍՊ ընկերությունները:

«Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով որոշել է՝ նիստը կասեցնել՝ առաջարկելով «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ին, «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին և «Վիէլվի Սենթր» ՍՊԸ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել hermineh@parliament.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Նիստը վերսկսվել է 12.12.2019թ.-ին ժամը 12:00-ին: Մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, որոշել է մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

«Վիէլվի Սենթր» ՍՊԸ-ի կողմից 16.12.2019թ.-ին ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով բողոքաբերը հայտնել է, որ «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի, «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «էյչ Վի Եյ Սի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է, իսկ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի վերաբերյալ նույն որոշմամբ եզրահանգել է, որ վերջինիս ուղղված Կարգի 41-րդ կետով նախատեսված ծանուցման մեջ անհամապատասխանության շտկման վերաբերյալ չի նշվել, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով անհամապատասխանության վերաբերյալ ծանուցվելու և մասնակցի կողմից Կարգի 42-րդ կետի համաձայն չշտկելու դեպքում միայն մասնակցի կողմից ներկայացված հայտը կարող է գնահատվել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Վերոնշյալները հաշվի առնելով, Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով որոշել է՝ նիստը կասեցնել և առաջարկելով «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին ծանուցել շտկելու 1.1 Հավելվածով սահմանված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսվել է 13.01.2020թ.-ին ժամը 12:00-ին: Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, ինչով պայմանավորված հանձնաժողովը որոշել է «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժել:

Մասնակիցն իր կողմից ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հավաստել է, որ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի հիման վրա «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին Պատվիրատուն ծանուցել է հավելված 1.1-ում շտկում կատարելու վերաբերյալ, սակայն այդ շտկումը չի կատարվել, քանի որ դա կլիներ սխալ տեխնիկական բնութագրի տրամադրում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում

հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ Ազգային ժողովի կողմից իր կարիքների համար 29.11.2019թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը շտկելով և ներկայացնելով hermineh@parliament.am էլեկտրոնային փոստի հասցեին, հայտը գնահատվել է բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմամբ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի վերաբերյալ եզրահանգել է, որ վերջինիս ուղղված Կարգի 41-րդ կետով նախատեսված ծանուցման մեջ անհամապատասխանության շտկման վերաբերյալ չի նշվել, ուստի Կարգի 41-րդ կետով սահմանված կարգով անհամապատասխանության վերաբերյալ ծանուցվելու և մասնակցի կողմից Կարգի 42-րդ կետի համաձայն չշտկելու դեպքում միայն մասնակցի կողմից ներկայացված հայտը կարող է գնահատվել հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Վերոնշյալները հաշվի առնելով, Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով որոշել է՝ նիստը կասեցնել և առաջարկելով «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին ծանուցել շտկելու 1.1 Հավելվածով սահմանված անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, ինչով պայմանավորված հանձնաժողովը որոշել է «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժել:

Մասնակիցն իր կողմից ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հավաստել է, որ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի հիման վրա «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին Պատվիրատուն ծանուցել է հավելված 1.1-ում շտկում կատարելու վերաբերյալ, սակայն այդ շտկումը չի կատարվել, քանի որ դա կլիներ սխալ տեխնիկական բնութագրի տրամադրում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հողվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.12.2019թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/86 որոշմանը և փաստել հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով

հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/808-2020 գրությամբ «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/13 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տուն Կոմպլեքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**